Իմ եարս ալ ի դուրս ելնէ կարմըրած զէտ վարդի տերեւ,
Իջնում ու պագիկ մ՚առնում ըզդընչին ներքեւն ու վերեւ:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա .

Գէմ չեմ Յուդայի ծընած կամ իմ հօրն ու մօրն անիծած,
Ես եմ աղկեկան բերած ու հազար նազով սընուցած:
Ես ինձ տարտեր շատ ունիմ, կամ սիրէ՛ կամ թո՛ղ զիս ի բաց.
Ձըգէ՛ խիղճ ի քո մըտիդ կամ յիշէ՛ աւուր մ՚աղուհաց:
Գամ կանգնիմ ի քո դիմաց, լամ, լալով անեմ քեզ իմաց.
Ընծի գէմ սէր չէ պակաս, կամ ի քո՛ սիրուդ կարօտած.
Սեւ սրտիկս ըզքեզ ուզաց, այլ ինծի խօշ եար չիպիտաց:

Բ .

Ա՛մ, ո՞վ էր հաներ վարեր զիր եարուկն՝ որ ես վարեցի:
Տարի ու անհուն լեռներն անցուցի ու շատ մի լացի.
Դարձայ սարերուն ասի, ձորերուն ապըսպըրեցի,
«Ուր երթաս, բարո՛վ կենաս, ես լալով զիմ կեանքս անցուցի»:

Գ .

Քան զան ալ, ա՛մ, ի՞նչ աղուոր՝ որ լինայ երկու սէրըն նոր,
Երկու սէրըն նոր լինայ ՚ւ երկուսին դըռուին մօտեւոր.
Առաւօտուն դուրս ելնեն, ան անոր բարեւ ՚ան անոր.
Թեւիկն ի շըլնին ձըգէ ու գանգտիկ անեն հին ու նոր,
Գիրկ ածէ ՛ւ ի տուն տանի, թէ՝ Մեզ հիւր եկաւ հեռաւ:

Դ .

Ելայ ես ի քեզ եկայ, քեզ յիսնէ կարօտ գիտէի:
Իմ գալն քեզ դիժար թըւաց, ես ի մի՛տըս անդիճեցի.
Մի՛ լար, մի՛ տըրտում կենար, մի՛ հաշուեր զօրըս քեզ տարի.
Ան ոտկունքն որ հոս բերաւ, նա կարէ որ ալվի տանի:

Ե .

Երբ դուն հետ ինձ սէր չունիս, է՞ր չասիր առաջին օրէ:
Հանց ղավլ ու ըխրար արիր թէ՝ Սիրէ՛, Տէրն զքեզ պահէ:
Հիմայ դու ի զատ ելար, պէմունաթ զքեզ ո՞վ տեսեր է.
Կ՚ասես դու ի քո մըտիդ՝ Տըղա՛յ է, զայլ ոք կու սիրէ: